

ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-068-18.10.2021,03.02.2022-S<-011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 44-րդ հոդվածը՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի եւ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի), իսկ Օրենսգրքի 73-րդ գլխի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ հինգերորդ հարկային տարին լրանալուց հետո: Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին եւ փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո:»:

2) 5-րդ մասում՝ «երեք տարի,» բառերից հետո լրացնել «իսկ տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկով՝ 5 տարի,» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգրքի 53-րդ հոդվածը՝

1) 9-րդ մասի 4-րդ կետից հանել «Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝», «Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝» և «Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված՝» բառերը.

2) 10-րդ մասում՝

ա"1-ին կետում «կողմից» բառից հետո լրացնել «, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների» բառերով.

բ. 2-րդ կետում «կասեցված է» բառից հետո լրացնել «, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների» բառերով»

գ" 3-րդ կետում «տարի» բառից հետո լրացնել «, իսկ տրանսֆերային գնագոյացման հաշվարկի դեպքում՝ 5 տարի,» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հարկ վճարողի (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաեւ ծնողի կամ խնամակալի) կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են ներկայացվել ճշտված հարկային հաշվարկներ: Տրանսֆերային գնագոյացման ճշտված հարկային հաշվարկներ կարող են ներկայացվել Օրենսգրքի 374-րդ հոդվածով սահմանված դեպքերում:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) տրանսֆերային գնագոյացման ստուգում՝ վերահսկվող գործարքների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության պարզման եւ դրա արդյունքում՝ շահութահարկի եւ բնօգտագործման վճար ոռյալթի հաշվարկման եւ վճարման ամբողջականության պարզում:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 336-րդ հոդվածը՝

1) Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հողված 336. Համալիր հարկային եւ տրանսֆերային գնագոյացման ստուգումների պլանավորումը»:

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Հարկային հսկողության շրջանակներում համալիր հարկային ստուգումների պլանավորումն իրականացվում է ռիսկերի վրա հիմնված հարկային ստուգումների համակարգի միջոցով: Ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների միջոցով հարկային մարմինն այդ ստուգումները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները եւ այն հարկ վճարողները, որոնք առավել ռիսկային են: Տրանսֆերային գնագոյացման ստուգումների պլանավորումն իրականացվում է հարկ վճարողի վերահսկվող գործարքների մասին ծանուցման ձեւի եւ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման միջոցով ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքում վերհանված ռիսկերի, ինչպես նաեւ սույն մասում նշված ծանուցման ձեւը եւ (կամ) տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորում չներկայացնելու դեպքերի հիման վրա: Հարկային մարմինը տրանսֆերային գնագոյացման ստուգումները նպատակաուղղում է դեպի այն գործարքները եւ այն հարկ վճարողները, որոնք առավել ռիսկային են:»:

3) 2-րդ մասում «Համալիր հարկային ստուգումները պլանավորելու նպատակով» բառերը փոխարինել «Համալիր հարկային եւ տրանսֆերային գնագոյացման ստուգումները պլանավորելու նպատակով» բառերով.

4) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1) հարկային մարմինը մշակում է հարկ վճարողների եւ նրանց գործունեության ռիսկայնության աստիճանը բնորոշող չափանիշները: Ռիսկի վրա հիմնված համալիր հարկային եւ տրանսֆերային գնագոյացման ստուգումների մեթոդաբանությունը եւ ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատում է Կառավարությունը, իսկ դրանց հաշվարկման եւ գնահատման կարգը հաստատում է հարկային մարմինը:»:

5) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ մասով՝

«9. Տրանսֆերային գնագոյացման ստուգումների տարեկան ծրագիրը հրապարակման ենթակա չէ:»:

**Հողված 6.** Օրենսգրքի 337-րդ հոդվածը՝

1) վերնագրում «հարկային» բառից հետո լրացնել «եւ տրանսֆերային գնագոյացման» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Համալիր հարկային եւ տրանսֆերային գնագոյացման ստուգումները նույն հարկ վճարողի մոտ, կախված ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետեւյալ հաճախականությամբ.

1) Համալիր հարկային ստուգման դեպքում.

ա. բարձր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հարկային տարվա ընթացքում մեկ անգամ.

բ. միջին ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան երեք հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ.

գ. ցածր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հինգ հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ:

2) Տրանսֆերային գնագոյացման ստուգման դեպքում.

ա. բարձր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան երեք հաջորդական հարկային տարվա ընթացքում 1 անգամ.

բ. միջին ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան չորս հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ.

գ. ցածր ռիսկայնության դեպքում՝ ոչ ավելի հաճախ, քան հինգ հաջորդական հարկային տարիների ընթացքում մեկ անգամ:»:

3) 4-րդ մասը՝

ա. «սահմանափակումները չեն տարածվում համալիր հարկային» բառերից հետո լրացնել «եւ տրանսֆերային գնագոյացման» բառերը.

բ. 3-րդ կետում «հարկ վճարողը» բառերից հետո լրացնել «համալիր հարկային ստուգումների տարեկան» բառերը:

գ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6) հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը դիմում է ներկայացրել համալիր հարկային եւ (կամ) տրանսֆերային գնագոյացման ստուգում իրականացնելու վերաբերյալ.»:

դ. 10-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«10) համալիր հարկային եւ (կամ) տրանսֆերային գնագոյացման ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: Սույն կետում նշված համալիր հարկային կամ տրանսֆերային գնագոյացման ստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի եւ ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին.»:»:

**Հոդված 7.** Օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասը՝

1) Առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Վերստուգումը հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնի կողմից հարկ վճարողի մոտ (համալիր հարկային կամ տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ ստուգված ժամանակաշրջաններում կազմակերպության վերակազմակերպման դեպքերում՝ իրավահաջորդի (իրավահաջորդների) մոտ նաեւ իրավանախորդների մասով) համալիր հարկային կամ տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ ստուգված հաշվետու ժամանակաշրջանի եւ ստուգված հարցերի երկրորդ եւ ավելի անգամ նույն տեսակի համալիր հարկային կամ տրանսֆերային գնագոյացման ստուգումն է, որը կարող է իրականացվել հետեւյալ հիմքերով.»:»:

2) 3-րդ կետում «համալիր հարկային» բառերից հետո լրացնել «կամ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

3) 4-րդ կետում «համալիր հարկային» բառերից հետո լրացնել «կամ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

4) 5-րդ կետում «համալիր հարկային» բառերից հետո լրացնել «կամ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

5) 6-րդ կետում «համալիր հարկային» բառերից հետո լրացնել «կամ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

**Հոդված 8.** Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասում «Համալիր հարկային» բառերից հետո լրացնել «եւ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

**Հոդված 9.** Օրենսգրքի 340-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում «ճշտության ստուգման հարցերը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման ստուգման հարցերի» բառերը:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մաս՝

«1.1. Տրանսֆերային գնագոյացման ստուգման հարցերը ներառում են այդ մասով հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, վերահսկվող գործարքների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության պարզման եւ դրա արդյունքում *շահութահարկի և բնօգտագործման վճար նոյալթիի* հաշվարկման եւ վճարման ամբողջականության ճշտության ստուգման հարցերը, բացառությամբ համալիր հարկային ստուգման հարցերի:»:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1-ին մաս՝

«2.1. Տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ ստուգվող ժամանակաշրջանը ներառում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո հարկային հաշվարկներ, ինչպես նաեւ վերահսկվող գործարքների մասին ծանուցումը ներկայացնելու պարտավորություն նախատեսող բոլոր հարցերի գծով՝ ստուգման հանձնարարագրի տրման օրվա դրությամբ հարկային հաշվարկների, ինչպես նաեւ վերահսկվող գործարքների մասին ծանուցման ներկայացման ժամկետները լրացած եւ տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ չստուգված բոլոր հաշվետու ժամանակաշրջանները:»:

4) 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերում՝ «համալիր հարկային» բառերից հետո լրացնել «եւ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

5) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Վերստուգման դեպքում համալիր հարկային եւ տրանսֆերային գնագոյացման ստուգման հարցերը ներառում են նախկինում նույն տեսակի համալիր հարկային եւ տրանսֆերային գնագոյացման ստուգմամբ (ստուգումներով) ստուգված ժամանակաշրջանների հարցերը:»:

6) 6-րդ մասում՝ «Համալիր հարկային» բառերից հետո լրացնել «եւ տրանսֆերային գնագոյացման» բառերը:

**Հոդված 10.** Օրենսգրքի 341-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում՝ «աշխատանքային օր» բառերից հետո լրացնել «, իսկ տրանսֆերային գնագոյացման ստուգման դեպքում՝ ոչ ավելի, քան 90 անընդմեջ աշխատանքային օր» բառերը:

2) 2-րդ մասն *առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով* «Տրանսֆերային գնագոյացման ստուգման դեպքում՝ հարկային ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա հանձնարարագիրը տվող պաշտոնատար անձի հրամանով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 90 անընդմեջ աշխատանքային օրով:» բառերը:

3) 6-րդ մասը *լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝* «Տրանսֆերային գնագոյացման ստուգման փաստացի ժամկետը չի կարող գերազանցել 180 անընդմեջ աշխատանքային օրը:» բառերը:

**Հոդված 11.** Օրենսգրքի 342-րդ հոդվածը՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հարկային ստուգումն ավարտվելուց հետո՝ տասը, իսկ տրանսֆերային գնագոյացման ստուգման դեպքում՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում, ստուգման արդյունքների ամփոփման հիման վրա, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, իսկ տրանսֆերային գնագոյացման ստուգման դեպքում՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության, ինչպես նաեւ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջների կատարման խախտումներ հայտնաբերված լինելու դեպքում, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է հարկային մարմնի սահմանած ձեւով ստուգման ակտի նախագիծ, որը ստորագրում է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) եւ այն կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ստուգման արդյունքում խախտումներ հայտնաբերված չլինելու դեպքում սույն մասով սահմանված ժամկետում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) երկու օրինակից կազմում է ստուգման ակտ (առանց ակտի նախագիծ կազմելու), որը ստորագրում է

ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) եւ այն կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:»:

2) 5-րդ մասի 3-րդ կետում «եւ գնահատման համար» բառերից հետո լրացնել «, իսկ տրանսֆերային գնագոյացման դեպքում՝ նաեւ պարզած ձեռքի հեռավորության տիրույթի եւ այդ տիրույթի մեդիանայի հաշվարկ, ներառյալ համադրելիության վերլուծության իրականացման համար օգտագործված տեղեկատվության աղբյուրների մասին տեղեկատվություն» բառերը.

3) 4-րդ մասի 4-րդ կետից հանել (*ՀՎՀՀ-ները*) բառերը.

4) 5-րդ մասի 3-րդ կետից հանել «*Օրենսգրքի 371-րդ հոդվածով սահմանված կարգով*» և «*Օրենսգրքի 365-րդ հոդվածի համաձայն*» բառերը.

5) 8-րդ մասի 2-րդ կետում «*Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում հարկ վճարողին*» բառերը փոխարինել «*Հարկ վճարողի դիմումի հիման վրա*» բառերով:

**Հոդված 12.** Օրենսգրքի 360-րդ հոդվածում՝

1) 2-րդ եւ 3-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Հարկային մարմինը սույն գլխով սահմանված հարկային հսկողություն իրականացնելիս պարզում է վերահսկվող գործարքների պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը, ինչպես նաեւ վերահսկվող գործարքների իրականացման արդյունքում ձեւավորվող Օրենսգրքով սահմանված հետեւյալ հարկի եւ վճարի հաշվարկման եւ վճարման ամբողջականությունը.

1) շահութահարկ.

2) բնօգտագործման վճար ուղյալի:

3. Սույն գլխի դրույթները չեն տարածվում.

1) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների եւ (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ իրականացված գործարքների նկատմամբ.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ իրականացված գործարքների նկատմամբ.



3) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով իրականացվող գործարքների նկատմամբ.

4) այն գործարքների նկատմամբ, որոնց համար վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են հարկվող բազայի որոշման առանձնահատկություններ:»:

**Հոդված 13.** Օրենսգրքի 361-րդ հոդվածը՝

1) 1-ին մասը՝

ա. 2-րդ կետից հանել «Օրենսգրքի 368-րդ հոդվածով սահմանված՝» բառերը.

բ" 3-րդ կետից հանել «Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված» բառերը<sup>2</sup>

գ" 4-րդ կետից հանել «Օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն» բառերը, ինչպես նաև «ցուցանիշների տիրույթ» բառերը փոխարինել «ցուցանիշների համախումբ» բառերով.

դ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) «հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք)՝ երկիր կամ աշխարհագրական տարածք, որտեղ՝

ա. գործում է շահութահարկի (համանման այլ հարկի) 10% տոկոս եւ ցածր դրույքաչափ կամ շահութահարկի ազատում.

բ. ռեզիդենտ անձը տվյալ երկրի կամ աշխարհագրական տարածքի օրենսդրության համաձայն ազատված է կամ վճարում է 10 % տոկոսից ցածր դրույքաչափով շահութահարկ (համանման այլ հարկ): Սույն ենթակետում նշված դեպքում երկիրը կամ աշխարհագրական տարածքը համարվում է հարկման հատուկ ազատական համակարգ ունեցող երկիր կամ աշխարհագրական տարածք՝ միայն սույն ենթակետում նշված անձանց մասով<sup>2</sup>».

ե. 6-րդ կետում՝ «օտարման,» բառից հետո լրացնել «ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի տրամադրման (ստացման), փոխառության տրամադրման (ստացման), դրամական պահանջի իրավունքի զիջման (փոխանցման), ֆինանսական ակտիվի օտարման (ձեռքբերման),» բառերով, ինչպես նաև հանել «Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված» բառերը.

զ. 9-րդ կետից հանել «Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն» բառերը.

է. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. ներքին չվերահսկվող գործարք՝ վերահսկվող գործարքի կողմերից մեկի և փոխկապակցված չհամարվող հարկ վճարողի միջև իրականացված գործարք. ».

ը 12-րդ կետից հանել «Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն» բառերը.

թ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-15-րդ կետերով՝

«13) անձ՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, ինչպես նաև տրաստը կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումը.

14) բազմազգ կազմակերպություն՝ կազմակերպություն, որի անդամ հանդիսացող կազմակերպությունները և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումները գործունեություն են ծավալում կազմակերպության գրանցման ռեզիդենտության երկրից փարբերվող առնվազն մեկ երկրում.

15) մեդիանայի հաշվարկ՝ ֆինանսական ցուցանիշների բազմությունից մեկ ցուցանիշի ընտրություն, որի հաշվարկման համար բոլոր ֆինանսական ցուցանիշները դասավորվում են աճման կարգով, և

ա) այն դեպքերում, երբ ֆինանսական ցուցանիշների բազմությունը բաղկացած է կենտրոնական ֆինանսական ցուցանիշներից, ապա մեդիանան կլինի այդ բազմության մեջտեղում գտնվող ֆինանսական ցուցանիշը,

բ) այն դեպքերում, երբ ֆինանսական ցուցանիշների բազմությունը բաղկացած է զույգ քանակով ֆինանսական ցուցանիշներից, ապա մեդիանան կլինի այդ բազմության մեջտեղում գտնվող երկու ֆինանսական ցուցանիշների միջին թվաբանականը:»:

**Հոդված 14.** Օրենսգրքի 362-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 362. Փոխկապակցված անձինք

1. Սույն գլխի կիրառության իմաստով՝ երկու եւ ավելի անձինք համարվում են փոխկապակցված, եթե՝

1) անձանցից մեկը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս անձի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի մյուսի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում.

2) միեւնույն անձն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է երկու եւ ավելի անձանց կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի դրանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի կիրառության իմաստով՝ համարվում է, որ անձը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս անձի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի մյուս անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում, եթե՝

1) անձին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում են մյուս անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս եւ ավելի բաժնետոմսերը, բաժնեմասը, փայաբաժինը.

2) անձը գործնականում վերահսկում է մյուս անձի գործարար որոշումները:»:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի կիրառության իմաստով՝ անձը գործնականում վերահսկում է մյուս անձի գործարար որոշումները՝ անկախ տվյալ անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցությունից, եթե հետեւյալ պայմաններից որեւէ մեկը բավարարվում է.

1) անձն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում կամ վերահսկում է մյուս անձի ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 20 եւ ավելի տոկոսը.

2) անձն ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկում է մյուս անձի գործադիր խորհրդի կամ տնօրենների խորհրդի ձեւավորման (ընտրման) գործընթացը.

3) անձի կողմից մյուս անձին տվյալ հարկային տարվա որեւէ օրվա դրությամբ տրամադրված եւ (կամ) երաշխավորված փոխառությունների գումարի հաշվեկշռային արժեքը գերազանցում է տվյալ հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ ստացողի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 51 տոկոսը, ընդ որում 51 տոկոսի հաշվարկի մեջ ներառվում են նաեւ մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը ստացված եւ (կամ) երաշխավորված փոխառությունների գումարները:

4) հարկային տարում հարկ վճարողի ձեռնարկատիրական եկամուտների 80 տոկոսից ավելին ստացվել է մյուս անձին ապրանքների մատակարարման, նրա համար աշխատանքների կատարման եւ (կամ) նրան ծառայությունների մատուցման գործարքներից, բացառությամբ գույքի վարձակալության եւ (կամ) անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման գործարքներից ստացվող եկամուտների եւ տոկոսների.

5) հարկային տարում հարկ վճարողի ձեռնարկատիրական ծախսերի 80 տոկոսից ավելին ճանաչվել է մյուս անձից ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման եւ

(կամ) ծառայությունների ստացման գործարքներից, բացառությամբ գույքի վարձակալության եւ (կամ) անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների ձեռքբերման եւ տոկոսների վճարման գործարքներից առաջացող ծախսերի.

6) *անձինք կնքել են համապետ գործունեության պայմանագիր, որով տվյալ հարկ վճարողն իր ակտիվների 50 տոկոսից ավելին ներդրել է համապետ գործունեության մեջ.*

7) անձինք կնքել են գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որով անձը (փոխառուն) մեկ տարուց ավելի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում է մյուս անձի (փոխատուի) գույքը, եւ այդ գույքի հաշվեկշռային արժեքը գերազանցում է տվյալ հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ փոխառուի համախառն ակտիվների հաշվեկշռային արժեքի 51 տոկոսը:

8) ֆիզիկական անձն իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն կամ հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ:»:

**Հոդված 15.** Օրենսգրքի 363-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

*«Հոդված 363. Վերահսկվող գործարքներ*

1. Սույն գլխի կիրառության իմաստով՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի տրամադրման (ստացման), փոխառությունների տրամադրման (ստացման), դրամական պահանջի իրավունքի զիջման (փոխանցման), ֆինանսական ակտիվի օտարման (*ձեռքբերման*), աշխատանքների կատարման եւ (կամ) ծառայությունների մատուցման գործարքը (*այսուհետ՝ Գործարք*) համարվում է վերահսկվող, եթե *այն* կատարվում է փոխկապակցված համարվող ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ անձանց միջեւ:

2. Փոխկապակցված համարվող ռեզիդենտ անձանց միջեւ իրականացված *Գործարքը* համարվում է վերահսկվող, եթե

1) Գործարքի կողմերից մեկը, Օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, համարվում է ռոյալթի վճարող.

2) Գործարքի կողմերից մեկը օգտվում է Օրենսգրքով՝ շահութահարկի եւ (կամ) ռոյալթիի գծով սահմանված հարկային արտոնություններից:

3. Հարկ վճարողի եւ հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրում (աշխարհագրական տարածքում) գրանցված անձի միջեւ Գործարքը համարվում է վերահսկվող՝ անկախ այդ հարկ վճարողի և այդ անձի միջև փոխկապակցվածության հանգամանքի:

3.1. Սույն գլխի կիրառման իմաստով, մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եւ այդ ոչ ռեզիդենտ անձի միջեւ ծախսերի բաշխումը և Գործարքի իրականացումը համարվում են վերահսկվող:

4. Սույն գլխի կիրառության իմաստով՝ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի դ)-ից ժե) ենթակետերով սահմանված ֆինանսական գործարքների ու գործառնությունների կատարումը, ինչպես նաեւ բանկային եւ այլ հաշիվների բացման, վարման ու սպասարկման, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը համարվում է չվերահսկվող, եթե այն իրականացվել է բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային եւ վարկային կազմակերպությունների կողմից:

5. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ վերահսկվող համարվող գործարքների նկատմամբ սույն գլխով սահմանված տրանսֆերային գնագոյացման կարգավորումները կիրառվում են, եթե հարկ վճարողի՝ հարկային տարվա ընթացքում իրականացրած բոլոր վերահսկվող գործարքների հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի եւ բնապահպանական հարկի):»:

**Հոդված 16.** Օրենսգրքի 364-րդ հոդվածը՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. *Վերահսկվող գործարք իրականացնելու դեպքում՝* հարկ վճարողի՝ շահութահարկով հարկման բազան եւ (կամ) ռոյալթիի բազան որոշվում են պարզաձև ձեռքի հեռավորության սկզբունքի համաձայն որոշված գների կամ այլ ֆինանսական ցուցանիշների հիման վրա:»:

2) 2-րդ մասից հանել «, ԱԱՀ-ով հարկման բազան» բառերը:

3) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Եթե վերահսկվող գործարքում ստեղծվում կամ առաջանում է այնպիսի պայման, որը չի համապատասխանում պարզաձև ձեռքի հեռավորության սկզբունքին, ապա՝

1) շահութահարկով հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում (այսուհետ սույն գլխում՝ շահութահարկի հարկման բազա), որը կարող էր առաջանալ հարկ վճարողի մոտ, եթե վերահսկվող գործարքի պայմանները համապատասխանեին պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, սակայն չի առաջացել վերահսկվող գործարքի պայմանների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով, հարկային մարմնի կողմից ներառվում է հարկ վճարողի շահութահարկով հարկման բազայի մեջ.

2) ոռյալթիի բազայի ցանկացած լրացուցիչ գումար, որը կարող էր առաջանալ հարկ վճարողի մոտ, եթե վերահսկվող գործարքի պայմանները համապատասխանեին պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, սակայն չի առաջացել վերահսկվող գործարքի պայմանների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով, հարկային մարմնի կողմից ներառվում է հարկ վճարողի ոռյալթիի բազայի մեջ:

Պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության պատճառով հարկ վճարողի եւ (կամ) հարկային մարմնի կողմից շահութահարկով հարկման բազայի կամ ոռյալթիի բազայի ճշգրտման արդյունքում որեւէ հաշվետու ժամանակաշրջանի մասով հարկ վճարողի հարկային պարտավորությունների (այդ թվում՝ կանխավճարների գծով) վերահաշվարկ չի կատարվում:

*Բնօգտագործման վճար ոռյալթի վճարողի և այլ ռեզիդենտ հարկ վճարողի միջև իրականացված վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության դեպքում ճշգրտվում է միայն բնօգտագործման վճար ոռյալթի վճարողի ոռյալթիի հաշվարկը:»:*

**Հոդված 17.** Օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «գործարկված կապիտալով» բառերը փոխարինել «շրջանառու կապիտալով» բառերով:

**Հոդված 18.** Օրենսգրքի 367-րդ հոդվածը՝

1) 1-ին և 2-րդ մասերից հանել «Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված» բառերը<sup>7</sup>

2) 3-րդ մասը՝

ա. 1-ին կետից հանել «, եթե այն չի համարվում հարկային գաղտնիք» բառերը.

բ. 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2) տրանսֆերային գնագոյացման համադրելիության վերլուծություններ իրականացնելու նպատակով կիրառվող, հարկային մարմնի կողմից սահմանված՝ միջազգային հեղինակավոր առետրային տվյալների բազաներում առկա ֆինանսական եւ այլ տեղեկություններ.»:

գ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ եւ 9-րդ կետերով՝

«8) կազմակերպությունների պաշտոնական կայքերում տեղադրված ֆինանսական եւ (կամ) տրանսֆերային գնագոյացման քաղաքականությունների վերաբերյալ հաշվետվությունները.

9) մետաղական եւ (կամ) արժեթղթերի բորսաների կողմից հրապարակված տեղեկատվությունը:»:

3) Ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը:

4) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5. Ռեզիդենտ հարկ վճարողների մասնակցությամբ չվերահսկվող գործարքների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում օտարերկրյա համադրելիների օգտագործումը ընդունելի է, եթե դրանք համադրելի են վերահսկվող գործարքի հետ:»:

**Հոդված 19.** Օրենսգրքի 368-րդ հոդվածը՝

1) 3-րդ մասի 3-րդ ենթակետից հանել «Օրենսգրքի 367-րդ և 370-րդ հոդվածների դրույթներին համապատասխան» բառերը,

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Սույն հոդվածի 3-րդ մասի չափանիշների հաշվառմամբ համադրելի չվերահսկվող գնի և տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառման հավասար արժանահավաստության դեպքում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելիս կիրառվում է համադրելի չվերահսկվող գնի մեթոդը:»

3) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6<sup>ա</sup> Սույն հոդվածի դրույթներին համապատասխան հարկ վճարողի կողմից վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու նպատակով տրանսֆերային գնագոյացման մեթոդի կիրառման դեպքում հարկային մարմնի կողմից վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի

հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելիս հիմք է ընդունվում նույն մեթոդը:».

4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Սույն հոդվածով նշված տրանսֆերային գնագոյացման մեթոդների առանձնահատկությունները եւ կիրառության կարգը սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 20.** Օրենսգրքի 370-րդ հոդվածից հանել «Օրենսգրքի 365-րդ հոդվածի դրույթների համաձայն,» և «Օրենսգրքի 365-րդ հոդվածով սահմանված» բառերը:

**Հոդված 21.** Օրենսգրքի 371-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«Հոդված 371" Պարզված ձեռքի հեռավորության տիրույթը

1. Պարզած ձեռքի հեռավորության տիրույթը համապատասխան ֆինանսական ցուցանիշների համախումբ է, որը ձևավորվում է համադրելի չվերահսկվող գործարքների համար տրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդի կիրառման արդյունքում:

2. Եթե վերահսկվող գործարքի կամ համակցված վերահսկվող գործարքի համար տրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդի կիրառման արդյունքում ստացված ֆինանսական ցուցանիշը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել այն մինչև մեդիանա՝ Օրենսգրքի [364-րդ հոդվածի 3-րդ մասի](#) համաձայն, ընդ որում ճշգրտման ճշտության ապացուցման բեռը կրում է հարկային մարմինը:

3. Եթե հարկ վճարողը չի համաձայնվում հարկային մարմնի կողմից պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս գտնվող ֆինանսական ցուցանիշը մինչև մեդիանա ճշգրտելու առաջարկի հետ, ապա մեդիանայից տարբերվող ֆինանսական ցուցանիշի կիրառման ճշտության ապացուցման բեռը կրում է հարկ վճարողը:

4. Պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկման կանոնները [սահմանում է](#) Կառավարությունը:»:

**Հոդված 22.** Օրենսգրքի 372-րդ հոդվածից հանել «Օրենսգրքի 365-րդ հոդվածում նշված» և «Օրենսգրքի 368-րդ հոդվածում նշված՝» բառերը:

**Հոդված 23.** Օրենսգրքի 373-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 373Ձ՝ Փաստացի տեղի ունեցած գործարքների ճանաչումը



Այն դեպքում, երբ փաստացի տեղի ունեցած վերահսկվող գործարքի բովանդակությունը տարբերվում է պայմանագրով նախատեսված գործարքի բովանդակությունից, ապա վերահսկվող գործարքի՝ *պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին* համապատասխանությունը պարզելը հարկային մարմնի կողմից պետք է հիմնված լինի փաստացի տեղի ունեցած գործարքի վրա՝ հաշվի առնելով Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործոնները:»:

**Հոդված 24.** Օրենսգրքի 374-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 374. Հարկ վճարողի կողմից իրականացվող ճշգրտումները

1. *Պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին չհամապատասխանող գործարքների իրականացման դեպքում* հարկ վճարողը կարող է ինքնուրույն վերահաշվարկել շահութահարկով հարկման բազան, եւ (կամ) ոռյալթիի բազան եւ Օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկներ (այդ թվում՝ ճշտված), եթե պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության դեպքում կարող էր ձեւավորվել շահութահարկով հարկման լրացուցիչ բազա, եւ (կամ) ոռյալթիի լրացուցիչ բազա:

2. Հարկային մարմնի կողմից Օրենսգրքի 376-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի, հարկային մարմնի կողմից պահանջված եւ հարկ վճարողի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվության եւ հարկային մարմնի պահանջով հարկ վճարողի հետ անցկացված հարցազրույցի վերլուծության արդյունքում, հարկ վճարողի վերահսկվող գործարքների՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին չհամապատասխանելու դեպքում, հարկային *մարմինը կարող է առաջարկել* հարկ վճարողին ճշգրտել վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշը մինչեւ մեղիանա, ճշգրտել շահութահարկով հարկման բազան եւ (կամ) ոռյալթիի բազան եւ մեկամսյա ժամկետում հարկային մարմին ներկայացնել տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկներ (այդ թվում՝ ճշտված):

3. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարողի կողմից ինքնուրույն իրականացվող ճշգրտումների արդյունքում առաջացած հարկի եւ վճարի գումարների նկատմամբ տույժեր չեն հաշվարկվում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերլուծության արդյունքների եւ համապատասխան առաջարկների հիման վրա, հարկ վճարողի կողմից

տրանսֆերային գնագոյացման հաշվարկի (այդ թվում՝ ճշտված) ներկայացման արդյունքում լրացուցիչ առաջացած հարկի եւ վճարի գումարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են հարկային մարմնի կողմից հարկ վճարողի վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշը մինչեւ մեդիանա ճշգրտելու վերաբերյալ առաջարկի ներկայացման օրվան հաջորդող օրվանից սկսած:

5. Տրանսֆերային գնագոյացման ստուգման արդյունքներով առաջադրվող հարկի եւ վճարի գումարների նկատմամբ տույժերը հաշվարկվում են դրանց առաջացման՝ այդ գործարքի հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկի ներկայացման համար՝ օրենքով սահմանված օրվանից սկսած:

6. Տրանսֆերային գնագոյացման հաշվարկի (այդ թվում՝ ճշտված) ձեւը, լրացման եւ ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:

**Հոդված 25.** Օրենսգրքի 375-րդ հոդվածը՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Եթե հարկ վճարողի, *բոլոր վերահսկվող գործարքների, բացառությամբ Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված վերահսկվող գործարքների*, հանրագումարը հարկային տարվա ընթացքում գերազանցում է 200 միլիոն դրամի շեմը (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի եւ բնապահպանական հարկի), ապա հարկ վճարողը պարտավոր է հարկային մարմին ներկայացնել վերահսկվող գործարքների մասին ծանուցում:»:

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Հարկ վճարողը վերահսկվող գործարքների մասին ծանուցումը լրացնում է հարկային մարմին է ներկայացնում մինչեւ յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ: Հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված վերահսկվող գործարքների մասին ծանուցման մեջ սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող է ներկայացվել ճշտված ծանուցումներ, մինչեւ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը հարկային մարմին ներկայացնելու վերաբերյալ գրավոր ծանուցման ստացման օրը:

Օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վերահսկվող գործարքների ծանուցումը ներկայացնում են գործարքի երկու կողմերը:

3) *լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մաս՝*

«4. Հարկային մարմինը վերահսկվող գործարքների մասին ծանուցման մեջ գործարքները սխալ կամ պակաս քանակությամբ լրացման փաստի հայտնաբերելու դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է հարկ վճարողին: Հարկ վճարողը ծանուցումը ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացնել ճշտված ծանուցում կամ առարկություններ՝ հայտնաբերված խախտումների վերաբերյալ:»:

**Հոդված 26.** Օրենսգրքի 376-րդ հոդվածը՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումն այն *տեղեկատվությունն է*, որը *հիմնավորում է* հարկ վճարողի վերահսկվող գործարքների համապատասխանությունը պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով՝

«1.1. Հարկ վճարողի կողմից կարող է ներկայացվել 3 տեսակ փաստաթղթավորում՝ տեղական փաստաթուղթ, գլխավոր փաստաթուղթ և երկրների միջև փոխանակվող հաշվետվություն:

1) *Տեղական փաստաթուղթ ներկայացվում է վերահսկող գործարք ծանուցած բոլոր հարկ վճարողների կողմից, որը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները.*

*ա. հարկ վճարողի գործարար գործառույթների մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ ապրանքների, ոչ նյութական ակտիվների, աշխատանքների և (կամ) ծառայությունների գնագոյացման գործընթացների վրա տնտեսական գործոնների ազդեցության վերլուծությունը.*

*բ. վերահսկվող գործարքների նկարագրությունը, այդ թվում՝ համադրելիության գործոնների վերլուծությունը, ինչպես նաև վերահսկվող գործարքի կողմերի իրականացրած գործառույթները, օգտագործված ակտիվները և կրած ռիսկերը.*

*գ. կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդների նկարագրությունը և հիմնավորում ընտրված մեթոդի վերաբերյալ.*

*դ. վերահսկվող գործարքների կողմերի ցանկը, այդ թվում՝ տեղեկատվություն հարկման նպատակով կողմի ռեզիդենտության վերաբերյալ.*

*ե. համադրելի չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրների նկարագրությունը.*

զ. պարզաձև ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկը (այն դեպքում, երբ կիրառելի է).

է. վերլուծության ենթակա կողմի վերաբերյալ ֆինանսական և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Տեղական փաստաթղթով պահանջվող տեղեկատվության բովանդակությունը, լրացման և ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Հարկային մարմինը տեղական փաստաթուղթ կարող է պահանջել նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներից:

2) գլխավոր փաստաթուղթ, որը ներկայացվում է բազմազգ կազմակերպության մայր կազմակերպության կողմից: Սույն հոդվածի կիրառման իմաստով բազմազգ կազմակերպության մայր կազմակերպությունն է համարվում այն կազմակերպությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է բազմազգ կազմակերպության մյուս անդամ կազմակերպություններից առնվազն մեկի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայտբաժին) ունի դրա կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում և այդ մասնակցությունը բավարար է տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունը իր համախմբված ֆինանսական հաշվետվության մեջ ներառելու համար:

Գլխավոր փաստաթուղթը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները.

ա. բազմազգ կազմակերպության կառուցվածքը.

բ. բազմազգ կազմակերպության գործունեության նկարագիրը.

գ. բազմազգ կազմակերպության ոչ նյութական ակտիվների նկարագրությունը.

դ. բազմազգ կազմակերպության անդամ հանդիսացող կազմակերպությունների կամ օտարերկրյա կազմակերպության օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմավորման միջև ֆինանսական գործառնությունները.

ե. բազմազգ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները, եկամուտների համաշխարհային տեղաբաշխման և տնտեսական գործունեության մասին ընդհանրական տեղեկատվություն: Գլխավոր փաստաթղթով պահանջվող տեղեկատվության բովանդակությունը, լրացման և ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

3) բազմազգ կազմակերպության մայր կազմակերպության կողմից՝ երկրների միջև փոխանակվող հաշվետվություն, եթե այդ կազմակերպության նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամուտը գերազանցում է 750 մլն եվրոն: Երկրների միջև փոխանակվող հաշվետվությունը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները.

ա. բազմազգ կազմակերպության եկամուտների համաշխարհային բաշխումն՝ ըստ երկրների.

բ. բազմազգ կազմակերպության կողմից վճարված հարկերը՝ ըստ երկրների.

գ. բազմազգ կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ երկրների,

դ. ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ երկրների:

Հաշվետվության ձեւն ու լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Սույն հոդվածով նախատեսված գլխավոր և տեղական փաստաթղթերով սահմանված տեղեկատվությունը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում: Հարկային մարմինը կարող է պահանջել լրացուցիչ այլ տեղեկատվություն, որը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հարկային մարմինը կարող է նաեւ պահանջել հարցազրույցի անցկացում հարկ վճարողի եւ (կամ) նրա ներկայացուցիչների հետ, որի վերաբերյալ ուղարկված գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողը պետք է գրավոր տեղեկացնի հարցազրույցի անցկացման վայրի, ժամկետների եւ մասնակիցների մասին տեղեկատվություն:

Սույն հոդվածով նախատեսված երկրների միջև փոխանակվող հաշվետվությամբ սահմանված տեղեկատվությունը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում յուրաքանչյուր հարկային տարվա ավարտից անմիջապես հետո տասներկուամյա ժամանակահատվածում:»:

**Հոդված 27.** Օրենսգրքի 377-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 377-ը Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Փոխհամաձայնեցման ընթացակարգը Հայաստանի Հանրապետության կամ Կառավարության անունից կնքված՝ կրկնակի հարկումը բացառելու մասին միջազգային համաձայնագրերի դրույթների կիրառման ժամանակ հարկային մարմինների միջև ի հայտ եկած հարկային հարցերով վեճերի լուծման գործընթացն է:

2. Փոխհամաձայնեցման ընթացակարգ կարող է սկսվել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա հարկային մարմնի առաջարկով, եթե երկու երկրների միջև առկա է գործող կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր:

3. Փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով հարկային հարցերով վեճերի լուծման կարգը եւ ժամկետները սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 28.** Օրենսգրքի 378-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 378. Նախնական գնագոյացման պայմանավորվածություն

1. Սույն գլխի կիրառության իմաստով հարկ վճարողը ոչ ռեզիդենտ փոխկապակցված կողմի/կողմերի հետ կատարված գործարքների մասով կարող է դիմել հարկային մարմնին նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման համար:

2. Նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման կարգը եւ պայմանները սահմանում է հարկային մարմինը:»:

**Հոդված 29.** Օրենսգրքում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 402.1 եւ 402.2-րդ հոդվածներ.

«Հոդված 402.1. Վերահսկվող գործարքի ծանուցման վերաբերյալ պարտականությունը չկատարելը

1. Վերահսկվող գործարքների մասին ծանուցումը Օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում գանձվում է տուգանք՝

1) 5 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի երկու միլիարդ դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների նկատմամբ.

2) 3 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի մեկ միլիարդ դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների նկատմամբ.

3) 1 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի մեկ միլիարդ դրամի շեմը չգերազանցած կազմակերպությունների նկատմամբ:

2. Վերահսկվող գործարքների մասին ծանուցման մեջ հարկային մարմնի կողմից ճշգրտված ծանուցման ձև ներկայացնելու գրավոր պահանջ ստանալուց հետո սխալ կամ պակաս քանակությամբ տեղեկություններ ներկայացնելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր սխալի կամ պակաս լրացված գործարքի մասով 500 հազար դրամի չափով:

3. Օրենսգրքի 375-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հարկ վճարողի կողմից ճշգրտված ծանուցում չներկայացնելու կամ ներկայացված առարկությունները հիմնավորված չհամարվելու դեպքում հարկային մարմնի կողմից հաշվարկվում և գանձման է առաջադրվում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի գումարը:

Հոդված 402.2. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման կանոնները խախտելը

«1. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը սահմանված ժամկետներում հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկ վճարողը վճարում է տուգանք՝ փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 10 տոկոսի չափով:

2՞ Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում հարկ վճարողի կողմից տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը հարկային մարմին չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 0.04 տոկոսի չափով:»:

**Հոդված 30.** Օրենսգրքի 428-րդ հոդվածի 2-րդ մասում «Օրենսգրքի 422-րդ հոդվածով նախատեսված տուգանքը» բառերը փոխարինել «Օրենսգրքի 402.1, 402.2 եւ 422-րդ հոդվածներով նախատեսված տուգանքները, Օրենսգրքի 402՞2-րդ հոդվածով նախատեսված տույժերը» բառերով:

### **Հոդված 31. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 28-րդ հոդվածի:

2. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 28-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 12-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 16-րդ հոդվածները կիրառվում են 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

4. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

**Առաջինից եւ** երկրորդ ընթերցում

Կ-068-18.10.2021,03.02.2022-ՏՀ-011/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 44-րդ հոդվածը՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի եւ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի), իսկ Օրենսգրքի 73-րդ գլխի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ հինգերորդ հարկային տարին լրանալուց հետո: Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին եւ փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո:»:



2) 5-րդ մասում՝ «երեք տարի,» բառերից հետո լրացնել «իսկ տրանսֆերային գնագոյացման Օրենսգրքի 374-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հարկային հաշվարկով՝ 5 տարի,» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգրքի 53-րդ հոդվածի ~~10-րդ մասը՝~~

1) ~~9-րդ մասի 4-րդ կետից հանել «Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝, «Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ և «Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված՝» բառերը~~

2) 10-րդ մասում՝

1ա) ~~1-ին կետում «կողմից» բառից հետո լրացնել «, բացառությամբ տրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների» բառերով. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝~~

~~«Բացառությամբ — տրանսֆերային — գնագոյացման — հարկային — հաշվարկների, հաշվարկված — հարկի — կամ — վճարի — վերաբերյալ — հարկային — հաշվարկներ — չեն — կարող ներկայացվել այն դեպքերում, եթե հարկային հաշվարկը վերաբերում է՝»~~

~~2) Տնտեսական փաստաթուղթ, որը ներկայացվում է վերահսկվող գործարք կատարած ռեզիդենտ հարկ վճարողի կողմից: Տեղական փաստաթուղթը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները:~~

~~ա. հարկ վճարողի գործարար գործառույթների մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ ապրանքների, ոչ նյութական ակտիվների, աշխատանքների և (կամ)~~



~~ծառայությունների գնագոյացման գործընթացների վրա տնտեսական գործոնների ազդեցության վերլուծությունը:~~

~~բ. վերահսկվող գործարքների նկարագրությունը, այդ թվում՝ համադրելիության գործոնների վերլուծությունը, ինչպես նաև վերահսկվող գործարքի կողմերի իրականացրած գործառույթները, օգտագործված ակտիվները և կրած ռիսկերը:~~

~~գ. կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդների նկարագրությունը և հիմնավորում ընտրված մեթոդի վերաբերյալ:~~

~~դ. վերահսկվող գործարքների կողմերի ցանկը, այդ թվում՝ տեղեկատվություն հարկման նպատակով կողմի ռեզիդենտության վերաբերյալ:~~

~~ե. համադրելի չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրների նկարագրությունը:~~

~~զ. պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկը (այն դեպքում, երբ կիրառելի է):~~

~~է. վերլուծության ենթակա կողմի վերաբերյալ ֆինանսական և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:~~

~~Տեղական փաստաթուղթով պահանջվող տեղեկատվության բովանդակությունը, լրացման և ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:~~

~~Հարկային մարմինը տեղական փաստաթուղթ կարող է պահանջել նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներից: - արտացոլում է մանրամասն տեղեկատվություն կազմակերպությունների միջեւ կատարված գործարքների մասին: Տեղական փաստաթուղթը ներառում է տեղեկատվություն, որն առնչվում է հարկ վճարողի եւ ոչ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջեւ կատարված գործարքների վերաբերյալ տրանսֆերային գնագոյացման վերլուծությանը: Տեղական փաստաթուղթը ներկայացվում է դուստր կազմակերպությունների կողմից: Տեղական փաստաթուղթով պահանջվող տեղեկատվության բովանդակությունը եւ ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը: Հարկային մարմինը տեղական փաստաթուղթ կարող է պահանջել նաեւ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներից:~~

~~3) Երկրների միջև փոխանակվող հաշվետվություն, որը ներկայացվում է այն բազմազգ կազմակերպության կողմից, որի նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամուտը գերազանցում է 750 մլն եվրոն: Երկրների միջև փոխանակվող հաշվետվությունը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները:~~

~~ա. բազմազգ կազմակերպության եկամուտների համաշխարհային բաշխումն՝ ըստ երկրների:~~

~~բ. բազմազգ կազմակերպության կողմից վճարված հարկերը՝ ըստ երկրների:~~

~~գ. բազմազգ կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ երկրների:~~

~~դ. ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ երկրների:»:~~

~~«Հաշվետվության ձեւն ու լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:~~  
արտացոլում է հարկային մարմինների միջև համընդհանուր տեղեկատվության տրամադրում, որն առնչվում է եկամուտների համաշխարհային տեղաբաշխմանը, վճարված հարկերին եւ բազմազգ կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ ցուցանիշներին: Երկրների միջև փոխանակվող հաշվետվությունը ներկայացվում է վերջնական մայր կազմակերպության կողմից: Տվյալ փաստաթղթի ձեւն ու լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:

3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Սույն հոդվածով 1-ին մասով սահմանված փաստաթղթերը նախատեսված գլխավոր և տեղական փաստաթղթերով սահմանված տեղեկատվությունը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում: Հարկային մարմինը կարող է պահանջել լրացուցիչ այլ տեղեկատվություն, որը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հարկային մարմինը կարող է նաեւ պահանջել հարցազրույցի անցկացում հարկ վճարողի եւ (կամ) նրա ներկայացուցիչների հետ, որի վերաբերյալ ուղարկված գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողը պետք է գրավոր տեղեկացնի հարցազրույցի անցկացման վայրի, ժամկետների եւ մասնակիցների մասին տեղեկատվություն:

Սույն հոդվածով նախատեսված երկրների միջև փոխանակվող հաշվետվությամբ սահմանված տեղեկատվությունը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում յուրաքանչյուր հարկային տարվա ավարտից անմիջապես հետո տասներկուամյա ժամանակահատվածում»:

**Հոդված 257.** Օրենսգրքի 377-րդ հոդվածը ~~ի 3-րդ մասում լրացնել շարադրել~~ հետևյալ բովանդակությամբ 2-րդ նախադասություն խմբագրությամբ՝

«Հոդված 377" Փոխհամաձայնեցման ընթացակարգ

4. Փոխհամաձայնեցման ընթացակարգը Հայաստանի Հանրապետության կամ Կառավարության անունից կնքված՝ կրկնակի հարկումը բացառելու մասին միջազգային համաձայնագրերի դրույթների կիրառման ժամանակ հարկային մարմինների միջև ի հայտ եկած հարկային հարցերով վեճերի լուծման գործընթացն է:

5. Փոխհամաձայնեցման ընթացակարգ կարող է սկսվել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա հարկային մարմնի առաջարկով, եթե երկու երկրների միջև առկա է գործող կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր:

3" Փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով հարկային հարցերով վեճերի լուծման կարգը եւ ժամկետները սահմանում է Կառավարությունը»:

«Փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով գործի լուծման կարգը սահմանում է Կառավարությունը»:

**Հոդված 268.** Օրենսգրքի 378-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 378. Նախնական գնագոյացման պայմանավորվածություն

1. Սույն գլխի կիրառության իմաստով հարկ վճարողը ոչ ռեզիդենտ փոխկապակցված կողմի/կողմերի հետ կատարված գործարքների մասով կարող է դիմել հարկային մարմնին նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման համար:

2. Նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման կարգը եւ պայմանները սահմանում է հարկային մարմինը»:

**Հոդված 279.** Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 402.1 եւ 402.2-րդ հոդվածներ.

«Հոդված 402.1. Վերահսկվող գործարքի ծանուցման վերաբերյալ պարտականությունը  
չկատարելը

1. Վերահսկվող գործարքների մասին ծանուցումը Օրենսգրքի 375-րդ հոդվածի 3-րդ  
մասով սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում գանձվում է տուգանք՝

1) 5 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ  
հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի երկու միլիարդ դրամի շեմը  
գերազանցած կազմակերպությունների նկատմամբ.

2) 3 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ  
հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի մեկ միլիարդ դրամի շեմը  
գերազանցած կազմակերպությունների նկատմամբ.

3) 1 միլիոն դրամի չափով՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ նախորդ  
հարկային տարվա արդյունքներով համախառն եկամտի մեկ միլիարդ դրամի շեմը  
չգերազանցած կազմակերպությունների նկատմամբ:

2. Վերահսկվող գործարքների մասին ծանուցման ձևում հարկային մարմնի կողմից  
ճշգրտված ծանուցման ձև ներկայացնելու գրավոր պահանջ ստանալուց հետո սխալ կամ  
պակաս քանակությամբ տեղեկություններ ներկայացնելու դեպքում գանձվում է տուգանք՝  
յուրաքանչյուր սխալի կամ պակաս լրացված գործարքի մասով 500 հազար դրամի չափով:

3. Օրենսգրքի 375-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հարկ վճարողի  
կողմից ճշգրտված ծանուցում չներկայացնելու կամ ներկայացված առարկությունները  
հիմնավորված չհամարվելու դեպքում հարկային մարմնի կողմից հաշվարկվում և գանձման է  
առաջադրվում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի գումարը:

2. Վերահսկվող գործարքների մասին ծանուցման ձևի մեջ գործարքները սխալ կամ  
պակաս քանակությամբ լրացնելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր սխալի կամ  
պակաս լրացված գործարքի մասով 500 հազար դրամի չափով:

Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման փաստաթղթերը սահմանված  
ժամկետներում հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկ վճարողը վճարում է  
տուգանք՝ ծանուցման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 10 տոկոսի  
չափով, իսկ սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա

~~համար տույժ՝ ծանուցման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 0.04 տոկոսի չափով:~~

Հոդված 402.2. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման կանոնները խախտելը

~~1. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման համար փաստաթղթերը սահմանված ժամկետներում հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկ վճարողը վճարում է տուգանք՝ ծանուցման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 10 տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար տույժ՝ ծանուցման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 0.04 տոկոսի չափով:»:~~

«1. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը սահմանված ժամկետներում հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկ վճարողը վճարում է տուգանք՝ փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 10 տոկոսի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում հարկ վճարողի կողմից տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը հարկային մարմին չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 0.04 տոկոսի չափով:»:

~~Հոդված 2830. Օրենսգրքի 428-րդ հոդվածի 2-րդ մասում «Օրենսգրքի 422-րդ հոդվածով նախատեսված տուգանքը» «Օրենսգրքի 422-րդ» բառերը փոխարինել «Օրենսգրքի 402.1, 402.2 եւ 422-րդ» «Օրենսգրքի 402.1, 402.2 եւ 422-րդ հոդվածներով նախատեսված տուգանքները, Օրենսգրքի 402.2-րդ հոդվածով նախատեսված տույժերը» բառերով:~~

**Հոդված 2931. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 246-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 268-րդ հոդվածի:

2. Սույն օրենքի 246-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 268-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի ~~12~~-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 16-րդ հոդվածները կիրառվում են 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

4. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-068-18.10.2021,03.02.2022-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 1	Առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի խմբագրությունը: Մասնավորապես, Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում «Օրենսգրքի 374-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված» բառերը փոխարինել «տրանսֆերային գնագոյացման» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 2	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված՝ 53-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը խմբագրել՝ հետագա տարընթերցումներից խուսափելու նպատակով: Մասնավորապես, «Հոդված 2. Օրենսգրքի 53-	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>րդ հոդվածը՝  1) 9-րդ մասի 4-րդ կետից հանել «Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝», «Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝» և «Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված՝» բառերը<sup>2</sup>  2) 10-րդ մասում՝ ա. 1-ին կետում «կողմից» բառից հետո լրացնել «, բացառությամբ փրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների» բառերով<sup>2</sup>  բ. 2-րդ կետում «կասեցված է» բառից հետո լրացնել «, բացառությամբ փրանսֆերային գնագոյացման հարկային հաշվարկների» բառերով<sup>2</sup>  գ. 3-րդ կետում «տարի» բառից հետո լրացնել «, իսկ փրանսֆերային գնագոյացման հաշվարկի դեպքում՝ 5 փարի,» բառերով:»</p>		
3.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 6	<p>Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:  Միաժամանակ՝ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետում «1-1.2-րդ</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:



			մասերը» բառերը փոխարինել «1-ին մասը» բառով:		
4.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 9	Նախագծի 9-րդ հոդվածում տեխնիկական հստակեցումներ կատարելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի՝ 1. 2-րդ կետում «1Ձ1-րդ» բառը փոխարինել «1Ձ1-ին» բառով: Նույն կետով նախատեսվող Օրենսգրքի 340-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասում «Օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հարկի և վճարի» բառերն առաջարկում ենք փոխարինել «շահութահարկի և բնօգտագործման վճար ոռոյալթի» բառերով: 2. 3-րդ կետում «2.1-րդ» բառը՝ «2.1-ին» բառով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 10	Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում կատարել տեխնիկական բնույթի փոփոխություններ: Մասնավորապես, Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «մասում «աշխատանքային օրով:» բառերից հետո լրացնել» բառերն առաջարկում ենք փոխարինել «մասն առաջին»	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p><i>նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝</i></p> <p>բառերով:          Նույն հոդվածի 3-րդ կետում «մասում «աշխատանքային օրով:» բառերից հետո լրացնել» բառերն առաջարկում ենք փոխարինել «մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝» բառերով:</p>		
6.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 11	<p>Առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածը լրացնել 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով՝ անհարկի հղումներից խուսափելու նպատակով: Մասնավորապես, Նախագծի 11-րդ հոդվածն առաջարկում ենք լրացնել 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«3) 4-րդ մասի 4-րդ կետից հանել (ՀՎՀՀ-ները) բառերը»</p> <p>4) 5-րդ մասի 3-րդ կետից հանել «Օրենսգրքի 371-րդ հոդվածով սահմանված կարգով» և «Օրենսգրքի 365-րդ հոդվածի համաձայն» բառերը»</p> <p>5) 8-րդ մասի 2-րդ կետում «Օրենսգրքի 339-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում հարկ վճարողին» բառերը</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<i>փոխարինել «Հարկ վճարողի դիմումի հիման վրա» բառերով:»:</i>		
7.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 13	<p>Առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածում անհարկի հղումներից խուսափելու նպատակով 1-ին կետը լրացնել «ա.» և «բ.» ենթակետերով, որի արդյունքում կփոխվի հոդվածի համարակալումը: Լրացված «ա.» և «բ.» ենթակետերն առաջարկում ենք շարադրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p><i>«ա. 2-րդ կետից հանել «Օրենսգրքի 368-րդ հոդվածով սահմանված՝ բառերը»</i></p> <p><i>բ. 3-րդ կետից հանել «Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված» բառերը»:</i></p> <p>Նույն հոդվածի 1-ին կետի ա. ենթակետը հոդվածի համարակալման փոփոխման արդյունքում վերահամարակալվել է և «ա. 4-րդ կետում» բառերը փոխարինվել է «գ. 4-րդ կետից հանել «Օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն» բառերը, <i>ինչպես նաև»</i> բառերով: Նույն հոդվածի բ. կետը առաջարկում ենք վերահամարակալել: Նույն հոդվածի գ. կետը</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>առաջարկում ենք վերահամարակալել, ինչպես նաև «օտարման» բառից հետո լրացնել «(ձեռքբերման)» բառը, իսկ «բառերով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հանել «Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված» բառերը» բառերը:</p> <p>Անհարկի հղումներից խուսափելու նպատակով 13-րդ հոդվածի 1-ին կետը առաջարկում ենք լրացնել՝</p> <p>1. «գ.» ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝ «գ<sup>9</sup> 9-րդ կետից հանել «Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն» բառերը»:</p> <p>2. «է.» ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝ «11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «11<sup>9</sup> ներքին չվերահսկվող գործարք՝ վերահսկվող գործարքի կողմերից մեկի և փոխկապակցված չհամարվող հարկ վճարողի միջև իրականացված գործարք»»:</p> <p>3. «ը.» ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝ «ը<sup>9</sup> 12-րդ կետից հանել «Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն» բառերը»:</p> <p>Նույն կետի «գ.»</p>		
--	--	--	--	--

		<p>ենթակետում  «կազմակերպությունների  խումբ, որը գործունեություն  է ծավալում բազմազգ  կազմակերպության  գրանցման  ռեգիստրացիայի երկրից  տարբերվող առնվազն մեկ  երկրում» բառերն  առաջարկում ենք  փոխարինել  «կազմակերպություն, որի  անդամ հանդիսացող  կազմակերպությունները և  (կամ) օտարերկրյա  օրենսդրությամբ  իրավաբանական անձի  կարգավիճակ չունեցող  իրավաբանական  կազմավորումները  գործունեություն են  ծավալում  կազմակերպության  գրանցման  ռեգիստրացիայի երկրից  տարբերվող առնվազն մեկ  երկրում» բառերով:  Հոդվածի 1-ին կետի «թ.»  ենթակետով Օրենսգրքի  361-րդ հոդվածի 1-ին  մասում մեդիանայի  հաշվարկման  ընթացակարգը  հստակեցնելու նպատակով՝  առաջարկում ենք լրացնել  15-րդ կետ հետևյալ  բովանդակությամբ՝  «15) մեդիանայի հաշվարկ՝</p>		
--	--	---	--	--

			<p>Ֆինանսական ցուցանիշների բազմությունից մեկ ցուցանիշի ընտրություն, որի հաշվարկման համար բոլոր ֆինանսական ցուցանիշները դասավորվում են աճման կարգով, և</p> <p>ա) այն դեպքերում, երբ ֆինանսական ցուցանիշների բազմությունը բաղկացած է կենտրոնացված ֆինանսական ցուցանիշներից, ապա մեդիանան կլինի այդ բազմության մեջտեղում գտնվող ֆինանսական ցուցանիշը,</p> <p>բ) այն դեպքերում, երբ ֆինանսական ցուցանիշների բազմությունը բաղկացած է զույգ քանակով ֆինանսական ցուցանիշներից, ապա մեդիանան կլինի այդ բազմության մեջտեղում գտնվող երկու ֆինանսական ցուցանիշների միջին թվաբանականը:»:</p>		
8.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 14	<p>Առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածը լրամշակել՝ անհարկի հղումներից խուսափելու նպատակով: Մասնավորապես, Նախագծի 14-րդ հոդվածից հանել «Օրենսգրքի 31-րդ</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			հողվածով սահմանված» բառերը:		
9.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հողված 15	<p>Առաջարկում ենք Նախագծի 15-րդ հողվածով նախատեսվող Օրենսգրքի 363-րդ հողվածում լրացնել վերնագիր՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Հողված 363. Վերահսկվող գործարկներ»:</p> <p>Ինչպես նաև նախատեսել փոփոխություններ, որոնք բխում են Նախագծի 13-րդ հողվածում իրականացված փոփոխություններից:</p> <p>Նախագծի 15-րդ հողվածով նախատեսված Օրենսգրքի 363-րդ հողվածի 1-ին մասում «ֆինանսական ակտիվի օտարման» բառից հետո առաջարկում ենք լրացնել «<i>ծեղքերման</i>» բառը, «մատուցման գործարքը» բառերից հետո՝ «<i>այսուհետ՝ Գործարք</i>» բառերը, իսկ «եթե» բառից հետո «գործարքը» բառը փոխարինել «<i>այն</i>» բառով:</p> <p>Նույն հողվածով նախատեսված Օրենսգրքի 363-րդ հողվածի 2-րդ մասում «ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, ոչ նյութական ակտիվների օգտագործման իրավունքի տրամադրման (ստացման),</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>փոխառությունների տրամադրման (ստացման), դրամական պահանջի իրավունքի գիջման (փոխանցման), ֆինանսական ակտիվի օտարման, աշխատանքների կատարման եւ (կամ) ծառայությունների մատուցման գործարքը» բառերը փոխարինել «Գործարքը» բառով:</p> <p>Նույն հոդվածով նախատեսված Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3-րդ մասից առաջարկում ենք հանել «վնասակար հարկային պրակտիկա կիրառող, ինչպես նաև», «այդ թվում՝ կառավարության կողմից սահմանված,» և «իրականացվող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքը,» բառերը, «երկրներում» բառը առաջարկում ենք փոխարինել «երկրում» բառով, «տարածքներում» բառը՝ «<i>տարածքում</i>» բառով, իսկ «անձանց» բառը՝ «<i>անձի</i>» բառով, ինչպես նաև «միջև» բառից հետո առաջարկում ենք լրացնել «Գործարքը համարվում է <i>վերահսկվող</i>» բառերը:</p> <p>Նույն հոդվածով նախատեսված Օրենսգրքի</p>		
--	--	---	--	--



			363-րդ հոդվածի 3.1-ին մասի «վճարողի և» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «այդ» բառը, ինչպես նաև «ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքները» բառերն առաջարկում ենք փոխարինել «և <i>Գործարքի իրականացումը</i> » բառերով:		
10.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 16-րդ հոդված	Նախագծի 16-րդ հոդվածի՝ 1. 1-ին կետում առաջարկում ենք կատարել տեխնիկական բնույթի փոփոխություն՝ անհարկի հղումներից խուսափելու նպատակով: Մասնավորապես, «Եթե հարկ վճարողն իրականացնում է Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված վերահսկվող գործարք, ապա» բառերը առաջարկում ենք փոխարինել է « <i>Վերահսկվող գործարք իրականացնելու դեպքում</i> » բառերով: 2. 3-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք նախատեսել դրույթ, որի համաձայն բնօգտագործման վճար ուղյակի հարկ վճարողի համար պարզաձ ձեռքի	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>հեռավորության սկզբունքին չհամապատասխանելը դեպքում, ճշգրտման ենթակա կլինի միայն ռոյալթի բազան:</p> <p>Մասնավորապես, Նախագծի 3-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետում առաջարկում ենք լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.</p> <p><i>«Բնօգտագործման վճար ռոյալթի վճարողի և այլ ռեզիդենտ հարկ վճարողի միջև իրականացված վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին անհամապատասխանության ն դեպքում ճշգրտվում է միայն բնօգտագործման վճար ռոյալթի վճարողի ռոյալթի հաշվարկը:»:</i></p> <p>Վերոնշյալ առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ բնօգտագործման վճար ռոյալթի վճարող ռեզիդենտի շահութահարկի հաշվարկը ճշգրտելու դեպքում չի թույլատրվում ճշգրտել գործարքի մյուս կողմ հանդիսացող ռեզիդենտ հարկ վճարողի շահութահարկի հաշվարկը, ինչը նշանակում է, որ</p>		
--	--	---	--	--

			միննույն հարկվող բազան հարկվում է կրկնակի:		
11.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 18-րդ հոդված	<p>Առաջարկում ենք Նախագծի 18-րդ հոդվածը լրամշակել՝ անհարկի հղումներից խուսափելու նպատակով, ինչպես նաև կանոնակարգել հարկային մարմնի կողմից հարկային գաղտնիք համարվող տեղեկատվության օգտագործման հնարավորությունները:</p> <p>Առաջարկում ենք հստակեցնել նաև չվերահսկվող գործարքների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում օտարերկրյա համադրելիներ օգտագործելու դրույթը: Նախագծի 18-րդ՝</p> <p>1. հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր 1) կետ հետևյալ բովանդակությամբ՝ «1-ին և 2-րդ մասերից հանել «Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված» բառերը»</p> <p>2. հոդվածի 2-րդ կետով նախատեսվող 3-րդ մասում առաջարկում ենք լրացնել նոր «ա.» ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ «1-ին կետից հանվել է «, եթե այն չի համարվում</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p><i>հարկային գաղտնիք» բառերը.»</i></p> <p>3. հողվածում առաջարկում ենք լրացնել նոր 3) կետ հետևյալ բովանդակությամբ՝ «3) ուժը կորցրած է ճանաչել 4-րդ մասը:»</p> <p>4. 3-րդ կետը առաջարկում ենք վերահամարակալել որպես 4-րդ կետ և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «5. Ռեզիդենտ հարկ վճարողների մասնակցությամբ չվերահսկվող գործարքների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում օտարերկրյա համադրելիների օգտագործումը ընդունելի է, եթե դրանք համադրելի են վերահսկվող գործարքի հետ:»:</p>		
12.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 19-րդ հոդված	Անհարկի հղումներից խուսափելու նպատակով՝ Նախագծի 19-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 368-րդ հոդվածում առաջարկում ենք կատարել մի շարք խմբագրական փոփոխություններ՝ անհարկի հղումներից խուսափելու նպատակով: Մասնավորապես, Նախագծի 19-րդ հոդվածում	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>առաջարկում ենք լրացնել 1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«1) 3-րդ մասի 3-րդ ենթակետից հանել</p> <p>«Օրենսգրքի 367-րդ և 370-րդ հոդվածների դրույթներին համապատասխան» բառերը,»:</p> <p>Նախագծի 19-րդ հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր 2-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>4Ձ Սույն հոդվածի 3-րդ մասի <i>չափանիշների հաշվառմամբ համադրելի չվերահսկվող գնի և տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառման հավասար արժանահավաստության դեպքում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելիս կիրառվում է համադրելի չվերահսկվող գնի մեթոդը:</i>»:</p> <p>Նույն հոդվածում առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«3) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>6Ձ Սույն հոդվածի դրույթներին</p>		
--	--	---	--	--

		<p> <i>համապատասխան հարկ վճարողի կողմից վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու նպատակով փրանսֆերային գնագոյացման մեթոդի կիրառման դեպքում հարկային մարմնի կողմից վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելիս հիմք է ընդունվում նույն մեթոդը:»:</i> </p> <p> Նախագծի 19-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 368-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկվող փոփոխությունն առաջարկում ենք վերահամարակալել որպես Նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ կետ, ինչպես նաև նույն կետում «նկարագրություն» բառն առաջարկում ենք փոխարինել «<i>առանձնահատկությունները</i>» բառով, իսկ «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը՝ «<i>սահմանում է Կառավարությունը</i>» բառերով: </p>		
--	--	--	--	--

13.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 20-րդ հոդված	Առաջարկում ենք անհարկի հղումներից խուսափելու նպատակով Նախագծի 20-րդ հոդվածում կատարել լրացումներ: Մասնավորապես, Նախագծի 20-րդ հոդվածում առաջարկում ենք ամրագրել հետևյալ նախադասությունը՝ «Օրենսգրքի 370-րդ հոդվածից հանել «Օրենսգրքի 365-րդ հոդվածի դրույթների համաձայն,» և «Օրենսգրքի 365-րդ հոդվածով սահմանված» բառերը:»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
14.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 21-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 20-րդ հոդվածով (վերահամարակալված որպես 21-րդ հոդված) նախատեսվող Օրենսգրքի 371-րդ հոդվածում հնարավորինս պարզեցնել պարզաձև ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկման առանձնահատկությունները: Փոփոխությունները խմբագրական են և չեն ենթադրում բովանդակային փոփոխություններ: Մասնավորապես, Նախագծի 20-րդ հոդվածն (վերահամարակալված որպես 21-րդ հոդված) առաջարկում ենք շարադրել հետևյալ	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>բովանդակությամբ՝</p> <p>«1. Պարզած ձեռքի հեռավորության փիրույթը համապատասխան ֆինանսական ցուցանիշների համախումբ է, որը ձևավորվում է համադրելի չվերահսկվող գործարքների համար փրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդի կիրառման արդյունքում:</p> <p>2. Եթե վերահսկվող գործարքի կամ համակցված վերահսկվող գործարքի համար փրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդի կիրառման արդյունքում ստացված ֆինանսական ցուցանիշը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության փիրույթից դուրս, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել այն մինչև մեդիանա՝ Օրենսգրքի <a href="#">364-րդ հոդվածի 3-րդ մասի</a> համաձայն, ընդ որում ճշգրտման ճշտության ապացուցման բեռը կրում է հարկային մարմինը:</p> <p>3. Եթե հարկ վճարողը չի համաձայնվում հարկային մարմնի կողմից պարզած ձեռքի հեռավորության փիրույթից դուրս գտնվող ֆինանսական ցուցանիշը</p>		
--	--	--	--	--



			<p>մինչև մեդիանա ճշգրտելու առաջարկի հետ, ապա մեդիանայից փարբերվող ֆինանսական ցուցանիշի կիրառման ճշտության ապացուցման բեռը կրում է հարկ վճարողը:</p> <p>4. Պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկման կանոնները <a href="#">սահմանում է</a> <a href="#">Կառավարությունը</a>:»:</p>		
15.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 22-րդ հոդված	<p>Նախագծի վերահամարակալված 22-րդ հոդվածով առաջարկում ենք Օրենսգրքի 372-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝ անհարկի հղումներից խուսափելու նպատակով և ամրագրել հետևյալ նախադասությամբ՝ «Հոդված 22. Օրենսգրքի 372-րդ հոդվածից հանել «Օրենսգրքի 365-րդ հոդվածում նշված» և «Օրենսգրքի 368-րդ հոդվածում նշված» քառերը:»:</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
16.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 23-րդ հոդված	<p>Առաջարկում ենք Նախագծի 21-րդ հոդվածում (վերահամարակալված որպես 23-րդ հոդված) լրացնել վերնագիր և խուսափել անհարկի հղումներից: Մասնավորապես, Նախագծի 21-րդ հոդվածում</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>առաջարկում ենք՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «Օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝» բառերը առաջարկում ենք ամրագրել որպես «Հոդված 23.» և «հոդվածի 1-ին մասը» բառերը փոխարինել «հոդվածը» բառով,</li> <li>2. լրացնել «Հոդված 373Պ Փաստացի տեղի ունեցած գործարքների ճանաչումը» վերնագիրը,</li> <li>3. «Օրենսգրքի 364-րդ հոդվածին» բառերը փոխարինել «պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին» բառերով:</li> </ol>		
17.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 24-րդ հոդված	<p>Առաջարկում ենք Նախագծի 24-րդ հոդվածում կատարել մի շարք խմբագրական փոփոխություններ:</p> <p>Մասնավորապես, Նախագծի 22-րդ հոդվածով (վերահամարակալված որպես 24-րդ հոդված) նախատեսվող Օրենսգրքի 374-րդ հոդվածի՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. 1-ին մասում «Եթե հարկ վճարողն իրականացնում է այնպիսի վերահսկվող գործարքներ, որոնց պայմանները չեն համապատասխանում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ապա» բառերը</li> </ol>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>առաջարկում ենք փոխարինել «Պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին չհամապատասխանող գործարքների հրականացման դեպքում» բառերով,  2. 2-րդ մասից հանել «, հաշվի առնելով Օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասը,» բառերը:</p>		
18.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 25-րդ հոդված	<p>Առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածում (վերահամարակալված որպես 25-րդ հոդված) կատարել խմբագրական փոփոխություններ, ինչպես նաև հստակեցնել պատասխանատվության միջոցներ կիրառելու ժամկետները և հիմքերը: Մասնավորապես, Նախագծի 23-րդ հոդվածի (վերահամարակալված որպես 25-րդ հոդված) 1-ին կետով լրացվող 1-ին մասում «բացառությամբ Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված վերահսկվող գործարքների, բոլոր վերահսկվող գործարքների» բառերը առաջարկում ենք փոխարինել «բոլոր վերահսկվող գործարքների, բացառությամբ Օրենսգրքի 363-րդ հոդվածի 3.1-ին</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>մասով սահմանված վերահսկվող գործարքների,» բառերով: Նույն հոդվածում 3-րդ կետն առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս՝</p> <p>4. Հարկային մարմինը վերահսկվող գործարքների մասին ծանուցման մեջ գործարքները սխալ կամ պակաս քանակությամբ լրացման փաստը հայտնաբերելու դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է հարկ վճարողին: Հարկ վճարողը ծանուցումը ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացնել ճշտված ծանուցում կամ առարկություններ՝ հայտնաբերված խախտումների վերաբերյալ:»:</p>		
19.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 26-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 24-րդ հոդվածում (վերահամարակալված որպես 26-րդ հոդված) հնարավորինս հստակեցնել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման կազմը և ներկայացման	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>կարգը, ինչպես նաև կատարել որոշ տեխնիկական բնույթի փոփոխություններ:</p> <p>Մասնավորապես, Նախագծի 24-րդ հոդվածի (վերահամարակալված որպես 26-րդ հոդված) 1-ին կետի 1-ին մասում «փաստաթուղթն» բառը առաջարկում ենք փոխարինել «տեղեկատվությունն» բառով, իսկ «ցույց է տալիս» բառերը՝ «հիմնավորում է» բառով:</p> <p>Նույն հոդվածի 2-րդ կետում «1.1-րդ» բառը առաջարկում ենք փոխարինել «1.1-ին» բառով և խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «1.1. Հարկ վճարողի կողմից կարող է ներկայացվել 3 տեսակ փաստաթղթավորում՝ տեղական փաստաթուղթ, գլխավոր փաստաթուղթ և երկրների միջև փոխանակվող հաշվեպրություն:</p> <p>1) Տեղական փաստաթուղթ ներկայացվում է վերահսկող գործարք ծանուցած բոլոր հարկ վճարողների կողմից, որը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները. ա. հարկ վճարողի</p>		
--	--	--	--	--

		<p>գործարար գործառույթների մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ ապրանքների, ոչ նյութական ակտիվների, աշխատանքների և (կամ) ծառայությունների գնագոյացման գործընթացների վրա տնտեսական գործոնների ազդեցության վերլուծությունը.</p> <p>բ. վերահսկվող գործարքների նկարագրությունը, այդ թվում՝ համադրելիության գործոնների վերլուծությունը, ինչպես նաև վերահսկվող գործարքի կողմերի իրականացրած գործառույթները, օգտագործված ակտիվները և կրած ռիսկերը.</p> <p>գ. կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդների նկարագրությունը և հիմնավորում ընտրված մեթոդի վերաբերյալ.</p> <p>դ. վերահսկվող գործարքների կողմերի ցանկը, այդ թվում՝ տեղեկատվություն հարկման նպատակով կողմի ռեզիդենտության վերաբերյալ.</p> <p>ե. համադրելի չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության</p>		
--	--	--	--	--

		<p>աղբյուրների նկարագրությունը.      գ. պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկը (այն դեպքում, երբ կիրառելի է).      է. վերլուծության ենթակա կողմի վերաբերյալ ֆինանսական և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:      Տեղական փաստաթղթով պահանջվող տեղեկատվության բովանդակությունը, լրացման և ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:      Հարկային մարմինը տեղական փաստաթուղթ կարող է պահանջել նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներից:      2) գլխավոր փաստաթուղթ, որը ներկայացվում է բազմազգ կազմակերպության մայր կազմակերպության կողմից:      Սույն հոդվածի կիրառման իմաստով բազմազգ կազմակերպության մայր կազմակերպությունն է համարվում այն</p>		
--	--	---	--	--

			<p>կազմակերպությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է բազմազգ կազմակերպության մյուս անդամ կազմակերպություններից առնվազն մեկի կառավարմանը, վերահսկմանը կամ մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) ունի դրա կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում և այդ մասնակցությունը բավարար է փվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունը իր համախմբված ֆինանսական հաշվետվության մեջ ներառելու համար:</p> <p>Գլխավոր փաստաթուղթը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները.</p> <p>ա. բազմազգ կազմակերպության կառուցվածքը.</p> <p>բ. բազմազգ կազմակերպության գործունեության նկարագիրը.</p> <p>գ. բազմազգ կազմակերպության ոչ նյութական ակտիվների</p>		
--	--	--	---	--	--



		<p>նկարագրությունը.  դ. բազմազգ  կազմակերպության անդամ  հանդիսացող  կազմակերպությունների  կամ օտարերկրյա  կազմակերպության  օրենսդրությամբ  իրավաբանական անձի  կարգավիճակ չունեցող  կազմավորման միջև  ֆինանսական  գործառնությունները.  ե. բազմազգ  կազմակերպության  ֆինանսական  հաշվետվությունները,  եկամուրների  համաշխարհային  տեղաբաշխման և  տնտեսական  գործունեության մասին  ընդհանրական  տեղեկատվություն:  Գլխավոր փաստաթղթով  պահանջվող  տեղեկատվության  բովանդակությունը,  լրացման և ներկայացման  կարգը սահմանում է  հարկային մարմինը:  3) բազմազգ  կազմակերպության մայր  կազմակերպության կողմից՝  երկրների միջև  փոխանակվող  հաշվետվություն, եթե այդ  կազմակերպության նախորդ</p>		
--	--	---	--	--

		<p>հարկային տարվա արդյունքներով համախառն եկամուտը գերազանցում է 750 մլն եվրոն: Երկրների միջև փոխանակվող հաշվետվությունը ներառում է մասնավորապես հետևյալ տեղեկությունները.</p> <p>ա. բազմազգ կազմակերպության եկամուտների համաշխարհային բաշխումն՝ ըստ երկրների.</p> <p>բ. բազմազգ կազմակերպության կողմից վճարված հարկերը՝ ըստ երկրների.</p> <p>գ. բազմազգ կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ երկրների,</p> <p>դ. ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ երկրների:</p> <p>Հաշվետվության ձեռն ու լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:</p> <p>Նախագծի 3-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասում «հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը» բառերն առաջարկում ենք փոխարինել «նախատեսված</p>		
--	--	--	--	--

			<p>գլխավոր և տեղական փաստաթղթերով սահմանված տեղեկատվությունը» բառերով:</p> <p>Ինչպես նաև նույն կետում առաջարկում ենք լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս՝ «Սույն հոդվածով նախատեսված երկրների միջև փոխանակվող հաշվետվությամբ սահմանված տեղեկատվությունը հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում յուրաքանչյուր հարկային տարվա ավարտից անմիջապես հետո տասներկուամսա ժամանակահատվածում:»:</p>		
20.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 27-րդ հոդված	<p>Նախագծի 25-րդ հոդվածը (վերահամարակալված որպես 27-րդ հոդված) առաջարկում ենք շարադրել նոր բովանդակությամբ՝ համապատասխանեցնելով միջազգային մոտեցումներին՝ «Հոդված 27. Օրենսգրքի 377-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 377<sup>Թ</sup> Փոխհամաձայնեցման ընթացակարգ <b>4.6.</b> Փոխհամաձայնեցման ընթացակարգը Հայաստանի</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>Հանրապետության կամ Կառավարության անունից կնքված՝ կրկնակի հարկումը բացառելու մասին միջազգային համաձայնագրերի դրույթների կիրառման ժամանակ հարկային մարմինների միջև ի հայտ եկած հարկային հարցերով վեճերի լուծման գործընթացն է:</p> <p><b>5.7.</b> _____ Փոխհամաձայնեցման ընթացակարգ կարող է սկսվել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա հարկային մարմնի առաջարկով, եթե երկու երկրների միջև առկա է գործող կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր:</p> <p><b>6.8.</b> _____ Փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով հարկային հարցերով վեճերի լուծման կարգը եւ ժամկետները սահմանում է Կառավարությունը:»:</p>		
21.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 29-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 27-րդ հոդվածը (վերահամարակալված որպես 29-րդ հոդված) հստակեցնել, որ տուգանքներ կիրառվում են միայն հարկային մարմնի կողմից սխալ կամ պակաս վերահսկվող գործարքներ հայտնաբերելու դեպքում,	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		<p>ինչպես նաև հստակեցնել տրանսֆերային փաստաթղթավորման կանոնները խախտելու դեպքում տուգանքների կիրառման ժամկետները: Մասնավորապես, Նախագծի 27-րդ (վերահամարակալված որպես 29-րդ հոդված) հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 402.1 հոդվածում առաջարկում ենք՝</p> <p>1. խմբագրել 2-րդ մասը հետևյալ բովանդակությամբ՝ լրացնել 2-րդ կետ՝ համապատասխան բովանդակությամբ՝</p> <p><i>«2. Վերահսկվող գործարքների մասին ծանուցման մեջ հարկային մարմնի կողմից ճշտված ծանուցման ձև ներկայացնելու գրավոր պահանջ ստանալուց հետո սխալ կամ պակաս քանակությամբ տեղեկություններ ներկայացնելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր սխալի կամ պակաս լրացված գործարքի մասով 500 հազար դրամի չափով:»:</i></p> <p>2. Լրացնել նոր 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝</p> <p><i>«3. Օրենսգրքի 375-րդ</i></p>		
--	--	---	--	--

		<p>հողվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հարկ վճարողի կողմից ճշտված ծանուցում չներկայացնելու կամ ներկայացված առարկությունները հիմնավորված չհամարվելու դեպքում հարկային մարմնի կողմից հաշվարկվում և գանձման է առաջադրվում սույն հողվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի գումարը:»:</p> <p>Նախագծի 27-րդ (վերահամարակալված որպես 29-րդ հողված) հողվածով նախատեսվող Օրենսգրքի 402<sup>2</sup>-րդ հողվածը առաջարկում ենք շարադրել նոր բովանդակությամբ՝ «1. Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը սահմանված ժամկետներում հարկային մարմնի չներկայացնելու դեպքում հարկ վճարողը վճարում է տուգանք՝ փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 10 տոկոսի չափով: 2<sup>2</sup> Սույն հողվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի նշանակման</p>		
--	--	--	--	--

			<p>օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում հարկ վճարողի կողմից պրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը հարկային մարմին չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է փոյժ՝ փաստաթղթավորման ենթակա յուրաքանչյուր վերահսկվող գործարքի արժեքի 0.04 տոկոսի չափով:»:</p>		
22.	<b>ՀՀ կառավարություն</b>	Նախագծի 30-րդ հոդված	<p>Նախագծի 28-րդ հոդվածը (վերահամարակալված որպես 30-րդ հոդված) տույժերի և տուգանքների ներդրման համակարգը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք շարադրել նոր բովանդակությամբ՝ «Հոդված 30. Օրենսգրքի 428-րդ հոդվածի 2-րդ մասում «Օրենսգրքի 422-րդ հոդվածով նախատեսված փուզանքը» բառերը փոխարինել «Օրենսգրքի 402.1, 402.2 եւ 422-րդ հոդվածներով նախատեսված փուզանքները, Օրենսգրքի 402<sup>Ձ</sup>2-րդ հոդվածով նախատեսված փոյժերը» բառերով:»:</p>	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

23.	<b>ՀՀ կառավարություն</b>	Հոդված 31	Առաջարկում ենք Նախագծում նոր հոդվածներ ի հայտ գալու պատճառով հստակեցնել եզրափակիչ և ուժի մեջ մտնելու դրույթները: Մասնավորապես, Նախագծի 29-րդ հոդվածի (վերահամարակալված որպես 31-րդ հոդված) 1-ին և 2-րդ կետերում «24» և «26» թվերը փոխարինել «26» և «28» թվերով, իսկ 3-րդ կետում՝ «11» թիվը փոխարինել «12» թվով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
-----	------------------------------	-----------	--	--	--------------